ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 601

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

17 հոկտեմբեր 2011թ.

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 124/1 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 2.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂ. ԽԱԼԼՈՒ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2010թ.դեկտեմբերի 10-ի վկայագրի՝ Դիլիջանի Սայաթ-Նովա փողոցի թիվ 124 հասցեի բնակելի տունը և տնամերձ հողամասը պատկանում է քաղ. Խալլու Սիմոնյանին: Քաղ. Խ.Սիմոնյանը դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված հասցեի տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Սայաթ-Նովա փողոցի թիվ 124 հասցեի տնամերձ հողամասի մակերեսը կազմում է 308.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 2.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (308.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա են բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սայաթ-Նովա փողոց թիվ 124 հասցեի բնակելի տանը և 310.0քմ տնամերձ հողամասին տալ նոր հասցե՝ ք. Դիլիջան, Սայաթ-Նովա փողոց թիվ 124/1:
1. Դիլիջան համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում վերը նշված 2.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Խալլու Սիմոնյանի սեփականության իրավունքը: Այսպիսով, Սայաթ-Նովա փողոցի թիվ 124 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 310.0քմ /308.0քմ+2.0քմ/մինչև 20%/:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Խալլու Սիմոնյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ